չհարցնի, դուք քիչ մոտ եկեք և ասացեք՝ Բարեբախտ արքա, քաղցրացրու քո շնորհը իմ աղերսների նկատմամբ: Այն ժամանակ ինչ Աստված կամենա, այն էլ կլինի:

Այս ասաց Ղայմաղ խանը և հրամայեց գնալ իր տեղը և պատրաստ լինել, ինչ որ պատվիրեցի, անել մեծ զգուշությամբ: Պայմանավորված օրը՝ ուրբաթ կեսօրին գնացին բուն պողոտայի ծայրը, որ ուղիղ էր սկզբից մինչև վերջ և միաբանների հետ կանգնեցին: Ահա թագավորը ելել բազմությամբ գնում էր: Մտավ պողոտան և նայելով տեսավ սև հավաքը և ասաց Ղայմաղ խանին, հայր (Լալա), ինչ են այն սևերը: Ղայմաղ խանն ասաց՝ ես լսել եմ, որ մի պատրի (պատրի բարձր հոգևորական) եկել է Պարսկաստանից և կամենում է համբուրել քո ոտքերը:

Եվ Ղայմաղ խանն ուղարկեց մի սուրհանդակ, որ ընդառաջ գան, իսկ կաթողիկոսը աջ ձեռքին բռնել էր Փիլիպոս կաթողիկոսի (կաթողիկոսին տված Մահմադ թագավորի) արքունական հրամանը, իսկ ձախ ձեռքին աղերսագիրը:

Եվ բարձրացրեց ձեռքերը կսկիծով ու դառը հեծեծանքով լաց էր լինում: Արքան հրամայեց վերցնել թղթերը: Հայրապետը գլուխը խոնարհեց և ասաց՝ «Ես ուխտել եմ համբուրել թագավորի ոտքերը և իմ ձեռքով նրան տամ թղթերը»: Կաթողիկոսին կանչեցին թագավորի մոտ: Թագավորը տեսավ, որ նա լալիս էր, ասաց՝ մի՛ լար, ծերունի, և թղթերը առավ: Կաթողիկոսը բռնեց ոտքերը և երեսը քսում էր (ոտքերին): Իսկ թագավորը խոնարհվեց, բռնեց մորուքից, բարձրացրեց և ասաց՝ մի՛ լար, հայր, քանզի քո խնդրանքը կկատարեմ:

Եվ բացելով արքայական հրամանը, ասաց՝ ես եմ տվել այս, իսկ ո՞վ է, որ ընդդիմանում է սրան: Բացեց աղերսագիրը կարդաց և ասաց՝ ո՞ր երկրում է Էջմիածինը (բնագրում Ուչքիլիսա): Ղայմաղ խանն ասում է՝ պարսից կողմում է: Արքան հարցնում է՝ ինչո՞ւ չի գնում պարսից թագավորի մոտ դատաստանի: Ղայմաղ խանն ասում է՝ սրա թշնամին մեր կողմերից է: Արքան հարցնում է՝ ինչպե՞ս կարող է նա պարսից աշխարհում իշխանություն գործադրել, եթե մեր կողմերից է: Ղայմաղ խանն ասում է՝ լսիր երանելի: Քանզի հայերը աղոթքի երկու գլխավոր տեղ ունեն՝ մեկը քո իշխանության մեջ է, կոչվում է Երուսաղեմ՝ Արաբստանի կողմում: Ամեն տարի պարսից կողմերից շատերը, անթիվներ այստեղ ուխտի են

գալիս և մեծ մաքս են վճարում ճանապարհին, իսկ Երուսաղեմին անչափ դրամ են տալիս, ավելանում է արքունի գանձին: Նաև երեք տարին մի անգամ Երուսաղեմից ուղարկում են Պարսկաստան, հավաքում են շատ ոսկի, արծաթ, դիպակյա հանդերձանքներ բերում են Երուսաղեմ, իսկ դա մեր ազգին օգտակար է: Իսկ մեր կողմից շատ չեն գնում Էջմիածին, եթե գնում էլ են, նրանց այնքան չեն տալիս, որ իրենց կերածն ու խմածը վճարի: Նրանք ևս երեք տարին մի անգամ նվիրակ են ուղարկում մեր կողմը, բայց չեն տալիս, ինչպես նրանք են տալիս, քիչ են տալիս: Մեր տանը նրանց մի տան չափ չեն տալիս, և այն էլ Եղիազարը չի կամենում տալ: Այս իմացնում են շահին, իսկ նա սահմանապահներ է նշանակել տալիս իր երկրում, որպեսզի Երուսաղեմ չգնան, նվիրակներին ևս արգելում են, իսկ դա մեր թագավորությանը մեծ վնաս է, մանավանդ թե նաև խռովություն կընկնի երկու թագավորների միջև:

Երբ Մահմադ թագավորը այս լսեց, խիստ վախեցավ և ասաց Ղայմաղ խանին՝ հրամայվեց քեզ հոգալ դրա բոլոր գործերը, իսկ դրա թշնամու գլուխը մոտ ժամանակներս բերեք ինձ մոտ: Այս ասաց, գնաց աղոթանոցը:

Ղայմաղ խանը ամենը, ինչ հրամայեց արքան, արեց՝ վերացրեց դիվանց երկու մարչիլ տուրքը, հանեց արքունական հրաման և տվեց կաթողիկոսին, հրամայեց, որ նրա բոլոր հակառակորդները հալածվեն իր դռնից: Ապա Եղիազարը եկավ նրա մոտ և միմյանց հետ հաշտվեցին:

Կաթողիկոսը գնաց Երուսաղեմ, դարձավ, եկավ Սուրբ Աթոռ Էջմիածին փառավորապես և կաթողիկոսությունը կառավարում էր, ինչպես որ արժան էր, ամեն ինչ անում էր, ինչպես որ պատշաճ էր:

ԳԼՈՒԽ ԽԱ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԴԱՐՁԸ ԷՋՄԻԱԾԻՆ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵԼԸ

Մինչդեռ Հակոբ կաթողիկոսը Կոստանդնուպոլսում էր, մյուս Աբաս խանն էր Երևանում և սրա փոխարեն, ազգով լազգի Սաֆի խանը եկավ (Երևան): Իր գալու սկզբին իրեն բոլորի աչքում լավ